ղեցրին իմ միտքը, երբ առաւօտեան զարթեցայ խորհրդաւոր մինարեթի մէջ:

Ինձ թւում էր, թէ ես ընկած եմ մի կախարդոած ամրոցի աւերակների մէջ, թէ մի դիւթական ձեռք ինձ բերեց այդ դիւաբնակ աւերակներում, թէ Կարօն, Ասլանը, Սագօն, — այդ բոլորը առաչօք եւ խաբէական պատկերներ էին: — «չէ՛, մտածում էի ես, թողնեմ, փախչեմ եւ հեռանամ այստեղից, գնամ մօրս մօտ, հնազանդ գլուխս խոնարհեցնեմ նրա առջեւ եւ ասեմ. «ես քեզանից չեմ հեռանայ, միշտ կաշխատեմ քեղ համար եւ քոյրերիս համար, միայն ինձ վարժատուն մի՛ ուղարկիր»:

Իսկ երբ վարժապետիս սարսափելի պատկերը աչքիս առջեւն էր գալիս, իսկոյն սթափւում էի, կրկին լուծւում էր դիւթական թիլիսմանը, եւ ես զգում էի, թէ իրականութեան մէջ եմ գտնւում, թէ այս բոլորը, ինչ որ տեսնում էի, երեւակայութեան ցնորքներ չէին: Իսկոյն փոխում էի միտքս. — «չէ՛, ասում էի, երազ չէ իմ տեսածը եւ ոչ կախարդութիւն. դրանք իմ լաւ ընկերներն են՝ Ասլանը հրեշտակի սիրտ ունի, Կարօն հէնց վարժարանում եղած ժամանակ սիրում էր ինձ, Սագօն նոյնպէս բարի տղայ է, նրա սիրտը այն չէ, ինչ որ լեզուն է: Չէ՛, կը մնամ այստեղ, դրանցից չեմ բաժանոի»...

Մինչեւ ես այսպիսի խորհրդածութիւնների մէջ էի, աչքս ընկաւ պառկած ընկերներիս վրայ. չգիտեմ ինչո՞ւ ես յիշեցի մի զրոյց, որ շատ անգամ լսել էի տատիս հեքիաթների մէջ: Ինձ երեւաց, որպէս թէ, այդ երեք երիտասարդները երեք հսկաների ձագեր լինէին, որոնց մայրը կաթի փոխարէն կերակրում էր ադամորդու արիւնով...որտեղի՞ց ծագեց իմ մտքում մի այդպիսի օտարոտի համեմատութիւն...

Կարօյի քունը անհանգիստ էր. երեւում էր, նա գտնւում է երազների սարսափելի խռովութեան մէջ. — «կսպանեմ, թէ չտաս» — «ո՞ւր ես փախչում» — «իմ գնդակը աւելի սրընթաց է, քան քո ոտները» — «ասլա՛ն, սատկացրու նրան» — «Սագօ, զգոյշ, մարդ չտեսնէ» -«նրանք այս կողմից փախան»... Ահա այսպիսի անկապ խօսքեր էին լսւում նրա բերանից: Նա խօսում էր խառն, զանազան արեւելեան լեզուներով:

Ասլանի քունը հանգիստ էր, որպէս երեխայի քուն: Երբեմն նրա գեղեցիկ շրթունքը ցնցւում էր թեթեւ ժպիտով: Նա լուռ էր: Մի անգամ միայն նա արտասանեց անունը «Սոնա»: — Խե՛ղճ տղայ, մտածում էի ես, նա ինձանից առաջ սիրում էր նրան... գուցէ այժմ տակաւին սիրում է...